ԱԶԳ

Օրվա հետքերով

# ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՈՐ 100-ԱՆՈՑ ԴՈԼԼԱՐԸ

*Ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, Մ. Նահանգներն սկսել է նոր դոլլարների հրապարակումը: Կատարելագործված այդ թղթադրամները նախագծված են այնպես, որ տեխնոլոգիական նոր առաջընթացի պայմաններում ավելի ապահով դառնան եւ երկրորդ, դյուրությամբ ճանաչելի լինեն: Նոր թղթադրամները օժտված են բազմաթիվ նոր տարբերանշաններով, միաժամանակ պահպանելով իրենց հին, ամերիկյան նկարագիրը:*

*Սկսելով 100-անոց թղթադրամներից, Ֆեդերալ ռեզերվը 1996 թ. առաջին ամսվանից կիրառարկի դրանք: Ինչ վերաբերում է մյուս 50-անոց, 20-անոց եւ 10-անոց թղթադրամներին, դրանք հետզհետե կիրառարկվեն առաջիկա տարիներին: Այսուհանդերձ, ինչպես նախատես զգուշացրել են, նոր թղթադրամների հրապարակ գալով բացարձակապես չեն արժեզրկվի հները, որոնք Ֆեդերալ ռեզերվի տիրույթում հայտնվելու պահին շարունակ կփոխարինվեն նորերով:*

*Իսկ հիմա թե ի՞նչ փոփոխություններ են կատարվել նոր 100-անոց դոլլարների վրա եւ ապահովական ի՞նչ նոր նշաններով է օժտվել այն:*




1. **Դիմանկարը:** Ավելի մեծացված ու տեղափոխված է Բենջամին Ֆրանկլինի մեզ ծանոթ դիմանկարը, որի վրա ավելացված են մանրամասներ, կեղծարարությունը դժվարացնելու նպատակով: Նոր թղթադրամներում Ֆրանկլինի դիմանկարը դրամատան կենտրոնից տեղաշարժված է մի փոքր ձախ, որպեսզի ծալելուց դիմանկարը չպատռվի կամ չմաշվի:

2. **Համակենտրոն նուրբ գծեր:** Թե՛ Բենջամին Ֆրանկլինի դիմանկարի եւ թե՛ թղթադրամի հակառակ կողմում, Անկախության դահլիճի ետեւի շուրջ խաչված համակենտրոն (կոնցենտրիկ) նուրբ գծերը դժվարացնում են կեղծումը:

3. **Ջրանշան:** Բենջամին Ֆրանկլինի ջրադրոշմը տեսանելի է թղթադրամի 2 կողմերից, այն լույսի դիմաց պահելու դեպքում:

4. **Գունափոխվող թանաք:** Նոր թղթադրամի ճակատային երեսի ներքեւի աջ մասում տպված թվանշանը (100) կանաչ գույնի է ուղիղ նայելու դեպքում, իսկ սեւ՝ անկյունագծով դիտելու պարագայում:

5. **Միկրոտպագրություն:** Բառեր, որ դրանք շատ մանր են, միկրոտպագրված բառերը դժվար է վերարտադրել: Թղթադրամի ճակատային կողմի ներքեւի ձախ հատվածում գտնվող 100 թվանշանի մեջ միկրոտպագրված են USA 100 բառերը, իսկ Ֆրանկլինի վերարկուի վրա՝ United States of America բառերը:

6. **Պաշտպանապարույր:** Պոլիմերային պաշտպանապարույրը (ալիքայ) տեղադրված հյուսված է ուղղահայաց դիրքով: Դրա վրա կարելի է կարդալ USA 100 տառերը թղթադրամի 2 կողմից էլ, այն լույսի դիմաց պահելու դեպքում: Հավելյալ պաշտպանապարույրն ուլտրամանուշակագույն լույսի ներքո դառնում է կարմիր:

7. **Ֆեդերալ ռեզերվի ինդիկատոր:** Սերիական համարից անմիջապես ներքեւ տպված են Ֆեդերալ ռեզերվի կնիքն ու համարանշանը:

8. **Սերիական համարանշան:** Հավելյալ 1 տառ է ավելացված սերիական համարանշանի վրա, տառերի եւ թվանշանների թիվը դարձնելով 11 (հին թղթադրամի վրա 10 տառ եւ թվանշան կար): Յուրաքանչյուր թղթադրամի համար նշանակի այս սերիական համարանշանը ընդամենը 2 տեղ է տպված:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Երեւան, 375019 Այգեձորի 15

■ Ժողովրդավարության եւ զարգացման հիմնադրամին անհրաժեշտ են փորձառու դիտորդներ Դպրոցներին Ձմեռային Աջակցություն ծրագրում աշխատելու համար: Աշխատանքը ժամանակավոր է եւ տեւելու է մեկ ամիս:

■ Դիմորդները պետք է կարողանան հավաքել տվյալներ, գործ ունենալ թվերի հետ, լինեն ճշտապահ եւ կազմակերպված, ունենան բարձրագույն կրթություն, վարժ տիրապետեն ռուսերեն եւ հայերեն լեզուներին եւ պատրաստ լինեն աշխատանքի անցնելու այս տարվա փետրվարի 1-ից:

■ Թափուր աշխատատեղերից մի քանիսը դիմորդից պահանջում են ունենալ սարքին վիճակում գտնվող անձնական օգտագործման ավտոմեքենա: Ցանկալի է, որ դիմորդները ունենան մարդասիրական օգնության ծրագրերում աշխատելու փորձ, անգլերենի իմացություն եւ ծանոթ լինեն ջերմամեկուսիչ նյութերի օգտագործման եղանակներին:

■ Ներկայացվում է միայն գրավոր դիմում, երբ հնարավոր է անգլերեն լեզվով, նշելով կրթությունը, աշխատանքային փորձը եւ երեք երաշխավորող անձերի տվյալները: Դիմել մինչեւ սույն թվի հունվարի 19-ը: Հեռախոսային դիմումներ չեն ընդունվում:




«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. [illegible] 2026. Տպաքանակը 3000. Ստորագրված է տպագրության 12. 01. 1996. Գինը 75 դրամ

digitised by A.R.A.R.@